600.0339.04.09.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

4 սեպտեմբերի 2019 թվականի №339Ա
քաղ. Երևան

«ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

բ) Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի N308Ն որոշման 1-ին կետով հաստատված էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգի (այսուհետ՝ Կարգ) №2 հավելվածի №2-2 ձևով նախատեսված՝ արտադրված էլեկտրական էներգիայի վերաբերյալ տեղեկատվությունը (այսուհետ՝ Տեղեկատվություն) էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից ներկայացվում է կիսամյակային արդյունքներով՝ մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 25-ը,

գ) «ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) Կարգով սահմանված ժամկետում 2019 թվականի 1-ին կիսամյակի Տեղեկատվությունը չի ներկայացրել Հանձնաժողով,

դ) Հանձնաժողովը Կարգով սահմանված Տեղեկատվության ներկայացման ժամկետի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2019 թվականի օգոստոսի 7-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 7-ի №ՍՇ/2.3-62/1926-19 գրությամբ,

ե) Ընկերությունը 2019 թվականի սեպտեմբերի 3-ի գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել 2019 թվականի 1-ին կիսամյակի Տեղեկատվությունը և, նշելով որոշակի տեխնիկական բնույթի խնդիրներ, ըստ էության ընդունել է խախտման փաստն ու հայցել Հանձնաժողովի ներողամտությունը,

զ) Հանձնաժողովի 2018 թվականի սեպտեմբերի 5-ի №344Ա որոշմամբ Ընկերությունը նախազգուշացվել է Կարգով սահմանված Տեղեկատվության ներկայացման ժամկետի խախտման համար,

է) Հանձնաժողովի իրականացրած վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը նախորդ վարչական վարույթը անբողոքարկելի դառնալու օրվանից մեկ տարվա ընթացքում կրկին խախտել է Կարգով սահմանված Տեղեկատվության ներկայացման ժամկետը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 10-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը տուգանել հինգ հարյուր հազար դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը՝

   1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

   2) ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ.ԲԱԲԱՅԱՆ**

ք. Երևան
04 սեպտեմբերի 2019թ.